Բժշկական խորհրդատվության տրամադրման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման կաբինետում դուք կարող եք ստանալ մասնագիտական խորհրդատվություն և պատվաստումներ հետևյալ հիվանդությունների դեմ

- դեղին տենդ
- հեպատիտ Ա և Բ
- մենինգակոկային վարակ
- կատաղություն
- սեզոնային գրիպ
- դիֆթերիա և փայտացում
- դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ
- կարմրուկ, կարմրախտ, խոզուկ
- որովայնային տիֆ
- մարդու պապիլոմավիրուսային վարակ
- պոլիոմիելիտ
- պնևմոկոկային վարակ
- ռոտավիրուսային վարակ
- ջրծաղիկի դեմ

Ցանկանում ենք

անհոգ ճանապարհորդություն

և անվտանգ մասնագիտական

գործունեություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՊԱՇՏՊԱՆՎԻՐ

ՎԱՐԱԿԻՉ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պատվաստվածները կստանան պատվաստումների միջազգային վկայական:
Պատվաստումներն իրականացվում են եվրոպական արտադրության և միջազգային չափանիշներին համապատասխան պատվաստանյութերով:

Տեղեկատվության համար կարող եք զանգահարել կամ այցելել՝

ք. Երևան, Դավիթ Մալյան 37
հեռ.: _____

ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Վարակիչ մահացու հիվանդություն է, որը բնորոշվում է նյարդային համակարգի ծանր ախտահարումով, ջղաձգությամբ, լուծանքով, ինչպես նաև կլման և շնչառական մկանների կծկանքով: Մարդը վարակվում է կատաղությամբ հիվանդ կենդանու /շներ, կատուներ, ուղտեր, ձիեր, իսկ վայրի կենդանիներից՝ գայլ, աղվես, շնագայլ/ կծելուց, ինչպես նաև վնասված մաշկի, հազվադեպ՝ շրթունքների, քթի, աչքերի լորձաթաղանթների թքոտման դեպքում: Բուժումն անարդյունավետ է:

Կանխարգելման հիմնական միջոցը պատվաստումն է:

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Բ

Ծանր վարակիչ հիվանդություն է, որն ախտահարում է լյարդը: Վիրուսային հեպատիտ Բ-ով կարելի է վարակվել՝

- չպաշտպանված սեռական հարաբերությունների ժամանակ՝ վարակված զուգընկերոջից
- ծննդաբերության ժամանակ՝ նորածինը վարակակիր մորից
- անձնական հիգիենայի /ատամների խոզանակների, ածելիների և այլ/ պարագաների ընդհանուր օգտագործման դեպքում
- ոչ մանրէազերծված բշժշկական և կոսմետոլոգիայում օգտագործվող արյան հետ առնչվող պարագաներից
- վարակված դոնորներից (եթե դոնորական արյունը նախապես չի ենթարկվել թեստավորման)



Կանխարգելման հիմնական միջոցը պատվաստումն է:

ԴԵՂԻՆ ՏԵՆԴ

Սուր ընթացքով վիրուսային հեմոռագիկ (հեմոռագիա-արյունազեղում) հիվանդություն է, որը փոխանցվում է վարակված մոծակների միջոցով: Դեղին տենդի մահացությունը կազմում է 50%: Այդ հիվանդությունը տարածված է

Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի արևադարձային շրջաններում: Դեղին տենդ հիվանդության բուժման համար դեղամիջոց չկա:

Կանխարգելման հիմնական միջոցը պատվաստումն է:

ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏ

Կոչվում է (մանկական ողնուղեղային լուծանք): Սուր ընթացքով վարակիչ հիվանդություն է, որը բնորոշվում է առավելապես կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումով և կարող է առաջացնել հաշմանդամություն: Հարուցիչը շրջակա միջավայր է ընկնում հիվանդի արտաթորանքի հետ և փոխանցվում է սննդամթերքի, օրինակ՝ բանջարեղենի, մրգերի, ջրի, չեռացրած կաթի միջոցով: Հիվանդության բռնկումներն առավել հաճախ դիտվում են ամռան վերջերին և աշնան սկզբներին: Սպեցիֆիկ բուժում դեռևս չկա:

Կանխարգելման հիմնական միջոցը պատվաստումն է:

ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՏԻՖ

Սուր ընթացքով աղիքային ինֆեկցիա է, որը բնութագրվում է ինտոքսիկացիայով, լյարդի և փայծախի մեծացումով, բարակ աղիների ավշային ապարատի ախտահարումով: Որովայնային տիֆով վարակվում են ֆեկալ-օրալ ճանապարհով (ջրով, սննդով) ինչպես նաև կենցաղային ճանա-պարհով:

Կանխարգելման հիմնական միջոցը պատվաստումն է:

Պատվաստումներ, որոնք անհրաժեշտ են ռիսկի խմբերին

- Գյուղատնտեսության աշխատողներ, շինարարներ
  Փայտացում
- Բուժաշխատողներ
  Գրիպ, Հեպատիտ Բ
- Սպասարկման ոլորտի աշխատողներ
  Գրիպ

Պատվաստումներ, որոնք անհրաժեշտ են մեկնողների համար

- Աֆրիկա
  Դեղին տենդ,
  Հեպատիտ Ա,
  Որովայնային տիֆ,
  Պոլիոմիելիտ
- Կենտրոնական և Հարավային Ամերիկա
  Դեղին տենդ,
  Հեպատիտ Ա,
  Որովայնային տիֆ,
  Հեպատիտ Բ
- Ասիա
  Հեպատիտ Ա,
  Որովայնային տիֆ,
  Կատաղություն,
  Փայտացում
- Հյուսիսային Ամերիկա
  Փայտացում,
  Հեպատիտ Բ,
  Կարմրուկ
- Եվրոպա
  Փայտացում ,
  Կարմրուկ,
  Հեպատիտ Բ
- Ավստրալիա
  Հեպատիտ Ա,
  Որովայնային տիֆ,
  Փայտացում